ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«25» հուլիս 2022թ. ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N 1170-1-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Գուրգեն Ռուբիկի Ներսիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N 34994/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության (արձանագրությունը կցվում է)՝ ֆիզիկական անձ Գուրգեն Ռուբիկի Ներսիսյանի (ՀՎՀՀ՝ 49524987, ՀԾՀ՝ 2705720081, հասցե՝ Արմավիր, Լենուղի 8փ. 1տ.) չկատարված հարկային պարտավորությունը 30.08.2021թ. դրությամբ կազմել է 104.543 դրամ, որից հարկ՝ 99.300 տույժ՝ 5.243 դրամ, որը հաշվարկվել է ֆիզիկական անձի կողմից 2020թ-ի ընթացքում տրանսպորտային միջոցների օտարման գործողությունների արդյունքում՝ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված կարգով:

Վերոնշյալ պարտավորությունը գանձելու վերաբերյալ 19.04.2022 թվականին կայացվել է թիվ 1170-Ա որոշումը:

Հաշվի առնելով ՀՏՌՎ վարչության 22.07.2021 թվականի թիվ Ն/71-4/128369-2022 գրությունն առ այն, որ ֆիզիկական անձ Գուրգեն Ռուբիկի Ներսիսյանի կողմից 14.04.2022 թվականին ներկայացվել է 2020 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ, ինչը վերաբերում է թիվ 34994/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրությամբ նշված գործարքին, ուստի առկա են բավարար հիմքեր թիվ 34994/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության հիման վրա կայացված թիվ 1170-Ա որոշումն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 65-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

Ֆիզիկական անձ Գուրգեն Ռուբիկի Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 19.04.2022թ. կայացված թիվ 1170-Ա որոշումը ճանաչել անվավեր:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Կատարող՝
Իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին
Կարեն Հովհաննիսյան
հեռ.՝ 010-309-191 (9128)